ական և եթէ պատժոյ արժան, և եթէ պարտակն, և եթէ գողացեալ ինչ պահիցէ ընդ իւր, որ փախուցեալ 'ի բանտէ և 'ի ձեռանէ գանգատողէ և կամ գողացեալ 'ի սեպհականութենէ, սա թագաստեան պահոցս պարտական լիցի մտանիլ 'ի բանտ ծախիւք իւրօք, կալով մնասցի 'ի բանտի մինչև վճիռ ելցէ 'ի վերայ գողին և սպանողին, սա թագուցանօղս ընկերակից լինիցի մահապարտին մինչև տեղի կախաղանի մեղաւորին, և քրէական մեղաւորն մեռցի և թագուցանօղն ազատեսցի 'ի մահուանէ ելցէ նախատանօք տուն տուն իւր և զամենայն զոր ինչ թագուցեալ 'ի գողացեալ իրաց յետս դարձուցէ 'ի դրունս դատաստանի վասն սեպհական տեառն ընչից։

ԳԼՈՒԽ ՅՂԴ.

Օրէնս հայոց տուաւ ազատութիւն ամենայն բնութեան մարդոյ զի ամենայն մարդ ազատապէս կարէ գործել բարի և զչար, կամաւորապէս յանձն առնուլով 'ի վերայ իւր 'ի օրինացն հայոց վարձ գործոց ձեռաց իւրոց, այլ հարկաւոր է ամենայն բնութիւն մարդոյ ունիլ բնականապէս ամօթխածութիւն իւր և շարժումն իւր 'ի ամենայն գործս պահել, ըստ չափաւորութեանն իւրաքանչիւր աստիճանի, զի մի լրբեսցի, քանզի լրբութիւն առն լկտոյ հարուցանէ բարկութիւն